



ԼԵՅԼԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԵՊԼՀ

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ՊՈԼԻՆԵՉԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԳՈՒՅՆ ավստրոնեզիական լեզվաընտանիքն ավանդաբար ներառում է չորս լեզվախմբեր՝ ինդոնեզիական, մելանեզիական, միկրոնեզիական եւ պոլինեզիական¹, նաեւ մի շարք այլ լեզուներ, որոնցով խոսում են Մալայան կղզեխմբի (արշիպելագ), Հնդկաչինի, Թայվանի, Օվկիանիայի եւ Մադագասկարի բնակիչները:

Ընդունված տեսակետի համաձայն՝ ավստրոնեզիական նախալեզվից ամենից վաղ անջատվել են պոլինեզիական լեզուները: Վերջիններս իսկ հնչյունական համակարգերն ավելի աղքատիկ են (պոլինեզիական լեզուներում առկա է միայն խուլ պայթականների շարքը՝ k, t, p), քան մելանեզիական լեզուներինը (այստեղ արդեն երեւան են գալիս q, d, b, ts, dz, x, sh հնչյունները), իսկ մալայականում դրանց ավելանում են նաեւ այլ հնչյուններ²: Պոլինեզիական լեզուները հայտնի են որպէս աշխարհի ամենաքիչ հնչյուններ ունեցող լեզուներ, դրանց հնչյունների քանակը տատանվում է 12-17-ի միջեւ: Օրինակ, հավայերենը, որ համարվում է աշխարհի ամենապարզ քերականություն ունեցող եւ ամենահին լեզուներից մեկը, նաեւ ամենաքիչ հնչյուններ ունեցող լեզուն է. այն ունի ընդամենը 12 հնչյուն՝ հինգ ձայնավոր՝ a, e, i, o, u եւ յոթ բաղաձայն՝ h, k, l, m, n, p, w:

¹ Գոյություն ունեն նաեւ բազմաթիվ այլ դասակարգումներ, ինչը պայմանավորված է լեզվաընտանիքի անբավարար ուսումնասիրված լինելու հանգամանքով:

² <http://languages.garshin.ru/australasian/austric/austronesian/index.html>, ըստ Энциклопедический словарь Брокгауза и Ефрона

Մասնագետներն ավստրոնեզիական լեզվաընտանիքը նմանեցնում են մի բարձրաբերձ ժայռի, որի ստորոտում գտնվում են պոլինեզիական լեզուները (որոնք քերականական հարաբերություններն արտահայտում են ինքնուրույն ձևույթներով), միջին մասում մելանեզիական լեզուներն են (մանավանդ viti (վիտի) բարբառը³, որն արդեն ձևավորել էր ստացական դերանվանական հոդեր), իսկ ամենավերելում գտնվում են զարգացած ինդոնեզիական (մալայական) լեզուները (նախածանցավոր եւ վերջածանցավոր)⁴: Պոլինեզիական լեզվախմբում նախապոլինեզերենից ամենավաղ անջատված լեզուն Զատիի կղզու (բնիկների լեզվով՝ Rapa Nui – Ռապա Նուի) լեզուն է՝ ռապանուերենը, որն առավել հարազատորեն է արտացոլում նախապոլինեզիական եւ նախաավստրոնեզիական լեզվավիճակները: Այդ նկատառումներից ելնելով՝ ներկա ուսումնասիրությունը համար հիմք (կամ չափանիշ) լեզու ընտրվել է ռապանուերենը:

Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների քանակը մոտ 3000 է՝ ըստ դեռեւս անավարտ «Ռապանուերեն-հայերեն ընդհանրությունների բառարան»ի: Դրանց մեջ բնիկ հայերեն համարվող ընդհանրությունների թիվն անցնում է 600-ից (մնացյալը համարվում են փոխառություններ տարբեր լեզուներից եւ անհայտ ծագման բառեր): Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների՝ բնիկ հայերեն ճանաչված զուգահեռներն ընդգրկում են Կ. Բաքի հնդեւրոպական համանիշների բառարանի բոլոր բառիմաստային (թեմատիկ) խմբերը: Ռապանուերեն-հայերեն ընդհանրությունների թվաքանակը (ռապանուերենի բառապաշարի 50%-ը) եւ ընդգրկման ոլորտը (բոլոր բառիմաստային խմբերը) բավարար հիմք են տալիս ենթադրելու հայերենի եւ պոլինեզիական լեզուների ցեղակցություն, իսկ որակը (բառացի նույնություն կամ կայուն հնչյունափոխական օրինաչափությունների իրացման արդյունք)⁵՝ նաեւ հայ-պոլինեզյան լեզվական հաջորդայնություն: Կարելի է փաստել, որ հիմնական բառապաշարի եւ քերականության՝ որակ կազմող ընդհանրությունները, երկու լեզուների կառուցվածքների, զարգացման միտումների եւ ներքին օրինաչափությունների համընկնումները վկայում են, որ ի դեմս ռապանուերենի եւ հայերենի գործ ունենք չափազանց հնում գործածված նախնական մի լեզվի տարժամանակյա դրսեւորումների հետ:

³ Այս բարբառի անունը նույնանում է հայերեն վիտի առանձին անգործածական արմատին, որի կրկնությամբ ունենք բրբ. (Ղբբ.) վիտիվիտի (անել) «շատախոսել», վիտվիտ (անել) «արագ-արագ խոսել», «բարձրաձայն կարգալ», վիտվիտալ «դատարկաբանել»:

⁴ <http://languages.garshin.ru/australasian/austric/austronesian/index.html>

Արդի հայերենի եւ ռապանուերենի հնչույթային համակարգերը ներկայացնում են չափազանց տարբեր պատկերներ. մեզ հայտնի հին գրավոր հայերենը՝ գրաբարն ունի 36 հնչույթ, որոնք արտահայտվում էին 36 տառերով, իսկ արդի հայերենի 36 հնչույթները գրության մեջ արտահայտվում են 39 տառերով: Ռապանուերենն ունի ընդամենը 14 հնչույթ (եւ կոկորդային պայթյուն), որոնք գրության մեջ արտահայտվում են 14 տառերով:

Հնչույթային համակարգերի տարբերություններից զատ տարբեր են նաեւ երկու լեզուներին վերագրվող տարիքները. ըստ պատմահամեմատական լեզվաբանության արդի նվաճումների՝ հայերենին վերագրվում է առավելագույնը 8 000–12 000 տարվա հնություն, իսկ հնագույն ավստրոնեզիական լեզվաընտանիքի պոլինեզյան ճյուղի լեզուներին, այդ թվում նաեւ ռապանուերենին՝ 40 000–50 000 եւ ավելի տարվա: Այդ պատճառով էլ հայերենի եւ պոլինեզիական լեզուների համեմատությունը չափազանց հետաքրքիր է երկուստեք՝ թե՛ հայերենի, թե՛ պոլինեզյան լեզուների ուսումնասիրման համար:

Ռապանուերենի ձայնավորները

Ցավոք սրտի՝ մասնագիտական գրականության մեջ⁵ քիչ տեղեկություններ կան ռապանուերենի հնչույթային համակարգի մասին՝ վերջինիս հնչույթաբանական առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրության բացակայության պատճառով: Բայց նկատի ունենալով այն փաստը, որ ձայնավորների հնգաստիճան համակարգն ընդհանուր է բոլոր պոլինեզիական լեզուների համար եւ, ըստ ամենայնի՝ նաեւ առավել կայուն է, կարելի է փաստել, որ ավելի լավ են ուսումնասիրված ձայնավորների տիպաբանական բնութագրերը:

Վերականգնված նախապոլինեզերեն լեզուն ենթադրաբար ունեցել է հինգ պարզ ձայնավոր (/a/, /e/, /i/, /o/, /u/)՝ առանց երկար/կարճ հակադրության: Ձայնավորների այս հնգաստիճան համակարգն ընդհանուր է բոլոր պոլինեզիական լեզուների համար, իսկ դրանցում առկա երկար ձայնավորներն ու երկձայնավորները, ըստ լեզվաբանական ուսումնասիրությունների արդյունքների, հետագայում են առաջացել՝ ձայնավորների միաձուլման արդյունքում:

⁵ Տե՛ս օրինակ՝ В. Крупа, Полинезийские языки, М., 1975, с. 19–31.

Ռապանուերենը եւս ունի հինգ ձայնավոր՝ **a, e, i, o, u**, որոնք ունեն հնչույթային տարբերություններ, կարող են լինել կարճ եւ երկար (կամ կրկնակի): Գրության մեջ երկար ձայնավորներն արտահայտվում են որպես կրկնակ ձայնավորներ. **a** – կարճ, **aa** – երկար կամ կրկնակի, **e** – կարճ, **ee** – երկար կամ կրկնակի եւ այլն:

Ռապանուերենի ձայնավորների համակարգն ունի հետեւյալ պատկերը.

Աղյուսակ 1.

Բարձր.\շարՖ	Առաջնային	Միջին	Ետին
Վերին	i		u
Միջին	e		o
Ստորին		a	

ա) Հայտնի է, որ հայերենի բարբառներում արձանագրվող ձայնավորների թիվը տատանվում է 6-ից 12-ի միջեւ: Սակայն՝ «Ուշագրության արժանի հանգամանք է այն, որ անկախ այդ միավորների քանակից, բոլոր բարբառներն էլ անխտիր ունեն հայերենի համար ընդհանուր վերը նշված վեց ձայնավորներ՝ **a, e, i, o, u, ə...** որոնք, ըստ բոլոր ուսումնասիրողների հավաստիացումների՝ իրենց արտասանական առանձնահատկություններով չեն տարբերվում ժամանակակից գրական հայերենի համապատասխան հնչույթներից: Դրանք փաստորեն այն ձայնավորներն են, որոնք վերականգնվում են նաեւ հին գրական հայերենի համար»⁶:

Գ. Զահուկյանը վաղնջահայերենի⁷ համար վերականգնում էր հնգաստիճան ձայնավորային համակարգ (***a, *e, *i, *o, *u, *ā, *ē, *ī, *ō, *ū**) եւ գտնում էր, որ այդ շրջանում երկար եւ կարճ ձայնավորները դեռեւս հնչույթային տարբերություն ունեին⁸ (նկատենք, որ վերականգնված հնդեւրոպական նախալեզվի ձայնավորների համակարգը նույնպես բնութագրվում է երկար եւ կարճ ձայնավորների հակադրությամբ):

⁶ Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Հայոց լեզվի պատմական քերականություն, հտ. 1, Հնչունաբանություն, Երեւան, 1982, էջ 32-33:

⁷ Եզրը շրջանառության մեջ է դրել Գ. Զահուկյանը՝ որպես протоармянский ձեւի համարժեք: Հայերենի պատմական զարգացման փուլերի մասին իր անդրադարձումն առաջարկում է հետեւյալ շրջանաբաժանումը. վաղնջահայերեն՝ հայերենի կազմավորման հեռավոր ժամանակներից մինչեւ Ք. ա. ժբ. դար եւ հնագույն հայերեն՝ Ք. ա. ժբ. դարից հետո (տես Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 25-26):

⁸ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 36:

Այսպիսով, վաղնջահայերենի համար Գ. Ջահուկյանի կողմից վերականգնված ձայնավորային համակարգը⁹ ճշտվել համապատասխանում է ռապանուերենի ձայնավորային համակարգին:

Ռապանուերեն	Վաղնջահայերեն
a, e, i, o, u,	*a, *e, *i, *o, *u,
aa, ee, ii, oo, uu	*ā, *ē, *ī, *ō, *ū

բ) Ժամանակակից հայերենի ձայնավորական համակարգը ներկայացնում է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 2.

Բարձր.\շարժ	Առաջնային	Միջին	Ետին
Վերին	ի		ու
Միջին	է(ե)	(ը)	օ(ո)
Ստորին			ա

Եթե վերջինս համադրենք ռապանուերենի ձայնավորների համակարգը ներկայացնող աղյուսակի հետ, կստանանք հետևյալ պատկերը.

Աղյուսակ 3.

Բարձր.\շարժ	Առաջնային	Միջին	Ետին
Վերին	i (ի)		u (ու)
Միջին	e (է/ե)	(ը)	o (օ/ո)
Ստորին		a	(ա)

Ինչպես տեսնում ենք, ռապանուերենի i, e, u, o ձայնավորները տիպաբանորեն նույնական են արդի հայերենի համապատասխան (ի, է, ու, օ) ձայնավորներին, փոփոխվել է միայն a(ա)-ի տիպաբանական բնութագիրը՝ մեկ հատկանիշով. ռապանուերենում այն ստորին բարձրության միջին շարքի ձայնավոր է, իսկ հայերենում՝ ստորին բարձրության ետին շարքի:

գ) Արդի հայերենն ունի ը ձայնավոր, որ բացակայում է ռապանուերենում: Այն եւս ռապանուերենի a ձայնավորից տիպաբանորեն

⁹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 225-226:

տարբերվում է մեկ հատկանիշով. ռապանուերենի **ա**-ն *ստորին* բարձրության միջին շարքի ձայնավոր է, իսկ հայերենի **ը**-ն՝ *միջին* բարձրության միջին շարքի:

Ըստ Հ. Մուրադյանի՝ «...ա ձայնավորը հին հայերենի դասական շրջանում միշտ կայուն եւ չհնչունափոխվող ձայնավոր էր», սակայն «...հետդասական եւ հատկապես միջին հայերենի շրջանից սկսած խախտվում է նրա այդ հատկությունը»¹⁰: Այս կարծիքը, թերեւս, կարիք ունի հետագա ճշգրտումների: Նորահայտ փաստերը խոսում են այն մասին, որ **ը** ձայնավորը նախապես կարող էր արտահայտվել *ա* հնչյունով, ինչին թերեւս ականատես ենք լինում ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում, որտեղ առկա է ռապ. **ա** – հայ. **ը** համապատասխանություն.

ռապան. **ա**₂ «հող, գործածվում է անձնանունների հետ» – հայ. **ը** որոշալ հող,

ռապան. **ա**₃ «մեջ» – բնիկ հայ. **ըն**- (**ըն**-կալել, **ըն**-տանի), (**ըն**-գրկել) բխեցվում է հնիս. *anti ձեւից, որի ներգոյականն է *ant «երես, ճակատ, առաջակողմ»), ընդարձակ գործածութիւն ունեցող նախդիր, որ զանազան հոլովներով զանազան նշանակութիւններ է ստանում, այդ թվում՝ «մէջտեղը, միանգամայն»¹¹: Կարծում ենք՝ համեմատելի է նաեւ հայ. **ըն**-դեր (**ըն**տեր) «փորոտիք, խորք» բառի հետ, որ բխեցվում է հ.ե. *entero- «ներքին» արմատից եւ համեմատվում հ. հնդ. antra «ներքին», հուն. εντερα «աղիք, փորոտիք, ընդերք», լատ. interus «ներքին» բառերի հետ¹²,

ռապան. **ա**₇ «շրջապատել» – գրբ. **ընդ** «շուրջ» (**ընդ**-գրկել), (տե՛ս **ա**₃-ը),

ռապան. mana₃ «մնալ» – մ(**ը**)նալ «մնալ», գրբ. մնամ (*menā-՝ *mēn- «մնալ». հմմտ. նաեւ հ. հնդկ. man- «հապաղել, հանգիստ մնալ», լատ. maneo «մնալ»),

ռապան. tatake (ta-take) «վեճ, վիճել» – բրբ. (ղրբ.) թակ տալ «ծեծել», թակ (ու) մհակ, նաեւ թըկըմըհակ «կռիվ, ծեծկռտուք», թըկը-թակե «ծեծ, տփոց», թակել «ծեծել»,

ռապան. hahari, (ha-hari) «կատակ, ծաղր» – հայ. հ(**ը**)ռհ(**ը**)ռալ «բարձրաձայն եւ անզուսպ ծիծաղել, ք(**ը**)ռք(**ը**)ռալ» եւ այլն:

¹⁰ Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատոր 1, Հնչունաբանություն, Երեւան, 1982, էջ 76:

¹¹ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայերեն արմատական բառարան (այսու՝ ՀԱԲ), էջ 122:

¹² Հր. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, էջ 125, Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, Երեւան, 2010, էջ 248:

Ռապանուերեն որոշ երկվանկ բառերի *a* վերջնահնչյունը, որը դրանց հայերեն զուգահեռներում հնչահապավման արդյունքում սովորաբար օրինաչափորեն ընկնում է, երբեմն կարծես համապատասխանում է հայերենի ը որոշյալ հոդին: Օրինակ՝

ռապան, hegahega (hega-hega) «կարմրավուն, կարմիր, պայծառ» – գրբ. շէկ/շէկ¹³ «զեղնակարմիր, խարտյաշ», բրբ. (Վն.) շէկ «շիկացած», (Ղրբ.) շէգ/շէգ (թերեւս՝ շէգյը),

ռապան, heva «խելագարություն», «խելագարվել» – գրբ. խեւ «գիժ, խելառ», Գ. Զահուկյանը կասկածանքով բխեցնում է հ.-ե. *(s)kebh- «կտրել, ճեղքել» արմատից (թերեւս՝ խեւը),

ռապան, hega₂ «լուսը բացվել», hehega (he-hega) «լուսը բացվել, արեւածագ» – գրբ. ծագ (Գ. Զահուկյանը կասկածանքով բխեցնում է հ.-ե. *g'ogh- «ցից, սյուն, ճյուղ» արմատից)¹⁴, բրբ. (Ղրբ., Տր., Տփ. եւլն) ծաք/ծէք «արեւածագ, արշալույս» (թերեւս՝ ծէքյը),

ռապան, hega₁ «ձկան անվանում» – գրբ. ձուկ(ը)ն «ձուկ» (*g'h(i)-kon՝ *g'hiu-)¹⁵, բրբ. (Ղրբ.) ծուկնը/ծուկըն, տես նաեւ անհայտ ծագման զիգ(ը)ն «մի ձուկ» (կարելի է ենթադրել որոշյալ հոդի կրկնակի գործածություն) եւ այլն:

Այս համապատասխանությունը նկատվում է նաեւ հայերենում. հմմտ. օրինակ, գրբ. անկանել/ընկենուլ «զցել, նետել», որից ունենք՝ ընկեցիկ, զընկենուլ, զէնընկեց եւլն (բխեցվում է *sengu- «ընկնել, խորասուզվել» արմատից, որտեղից ծագած է համարվում անկանել (*sngu-)բայը¹⁶, իսկ ավելի ուշ շրջանում՝ գրբ. առատ/միջին հայերեն ըռատ «առատ, լի, առատաձեռն»¹⁷:

Այն մանավանդ հատուկ է հայերենի՝ գրաբարից ավելի հնատիպ համարվող արեւելյան խմբի առավել տիպական բարբառներին, ինչպես օրինակ՝ արածել/ըրածել, առաւել/ըռավալ, անդար-ընդերու «անտեր-անտիրական», անդոր/ընդուր «այդ պատճառով», առաջին/առաջի/ըռը-չի,¹⁸ նաեւ ա նախասկիզբ ունեցող բառերի հոլովաձեւերում անգյուն/

¹³ Համարվում է փոխառ. իրան. անհայտ աղբյուրից. Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 586:

¹⁴ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 357:

¹⁵ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 477:

¹⁶ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, էջ 128, Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 249, հմմտ. գ. *sinkwan, գոթ. sigqan, հ. վ. գ. sinkan, sinken «ընկնել, սուզվել»:

¹⁷ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 73:

¹⁸ ՏԷՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ, Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013:

ընգյունան/ընգյունավը, աշունք/ըշունքան/ըշունքավը, ախճիգյ/ըխճըկանա/ըխճըկանավը, անգունճ/ընգունճան/ընգունճավը եւլն:

Ենթադրում ենք, որ, ըստ ամենայնի՝ ռապանուերենում, նաեւ պոլինեզիական լեզուների միջեւ փաստված մի շարք հնչյունական համապատասխանություններ եւ հերթագայություններ հայերենի կազմավորման վաղնջագույն շրջանում սաղմնավորվող բարբառների նախնական հնչյունական տարբերությունների արտացոլումն են: Նորություն չէ, որ, «...բարբառային արդի տարբերությունների զգալի մասը հիմքերունի բարբառային ավելի հին տարբերությունների մեջ: Դրանց թվին են պատկանում հատկապես հնչյունական որոշ կարեւոր հատկանիշներ»¹⁹:

Ռապանուերենի բաղաձայնները

Պոլինեզիական լեզուների բաղաձայնների թիվը տատանվում է 8–12-ի միջեւ: Բաղաձայնների ամենասակավաթիվ քանակն արձանագրված է հավայերենում (8): Անգամ արեւմտապոլինեզիական տոնգա լեզուն, որ պոլինեզիական լեզուների մեջ ամենահարուստ բաղաձայնական համակարգ ունեցող լեզուն է, ունի ընդամենը 12 բաղաձայն: Ռապանուերենը եւս ունի սակավաթիվ բաղաձայններ (10):

Պոլինեզիական բոլոր լեզուների պես, ռապանուերենը եւս գործածում է քմային հնչյուն (ng), որը հիշեցնում է անգլերեն լեզվի sing բառի ng-ն կամ ռուսերենի нг հնչյունակապակցությունը (դյուրինություն համար գրության մեջ արտահայտվում է g տառով):

Ինչպես նշվեց, ռապանուերենը շատ վաղ է անջատվել մյուս պոլինեզիական լեզուներից, ավելի վաղ, քան մաորին, մարկիզերենը, հավայերենը: Ըստ էմորիի՝ վիճակագրական տվյալները վկայում են, որ Զատկի կղզու լեզուն ամենից վաղ է անջատվել մյուս արեւելապոլինեզիական լեզուներից²⁰: Այս մասին է վկայում նաեւ կոկորդային հնչյունի առկայությունը, որն անհետացել է Պոլինեզիայի այլ կղզիներում, սակայն պահպանվել է տոնգա լեզվում: Օրինակ՝ ռապան. ma'unga «սար» – տոնգա mo'unga, ռապան. ra'a «արեւ» – տոնգա la'a, ռապան. va'e «ոտք» – տոնգա va'e, ռապան. ho'ou «նոր» – տոնգա fo'ou, ռապան.

¹⁹ Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայ բարբառագիտության ներածություն, Երեւան, 1972, էջ 189:

²⁰ K. P. EMORY, East Polynesian relationships, "Journal of the Polynesian Society", 1963, Vol. 72, p. 78–100.

tu'u «կանգնել» – տոնգա tu'u, ռապան. hetu'u «աստղ» – տոնգա fetu'u եւ այլն²¹: Ռապանուերեն բնագրերում կոկորդային հնչյունն արտացոլող նշանը սովորաբար չի նշվում՝ հրատարակչական գործընթացը հեշտացնելու նպատակով:

Հնչյունները ռապանուերենում նշանակվում են ըստ Ս. Էնգլերտի՝ 14 տառերով. A, E, G (ng), H, I, K, M, N, O, P, R, T, U, V:

Այսպիսով՝ ռապանուերենի հնչյունական համակարգն ամբողջությամբ ներկայացնում է հետեւյալ պատկերը.

Vowels

a	e	i	o	u
[a]	[e]	[i]	[o]	[u]

Consonants

h	k	m	n	g/ng	p	r	t	v	ʻ/ʼ
[h]	[k]	[m]	[n]	[ŋ]	[p]	[r]	[t]	[v]	[ʔ]

Պոլինեզիական նախալեզվի համար վերականգնված է բաղաձայնների հետեւյալ շարքը. *p, *t, *k, *q, *m, *n, *ŋ, *w, *f, *s, *h, *l, *r:

Նախապոլինեզերեն լեզվի բաղաձայնական համակարգի համեմատությունը արդի պոլինեզիական լեզուներում դրանց արտացոլումների հետ հանգեցնում է այն եզրակացության, որ որոշ բաղաձայններ ավելի կայուն են, քան մյուսները: Այդ հարցի՝ պոլինեզիական 29 լեզուներում կատարված ուսումնասիրությունը²² տվել է հետեւյալ արդյունքները (փակագծերում նշված թվերը ցույց են տալիս, թե համեմատվող 29 լեզուների քանի տոկոսն է պահպանել տվյալ հնչույթը). m (100%), p (100%), n (97%), t (97%), ŋ (93%), k (86%), f (62%), l (59%), s (49%), r (41%), ʔ (17%), w (14%), h (10%)²³:

Պոլինեզիական լեզուների (այդ թվում՝ նախապոլինեզերենի) բաղաձայնական համակարգերի համեմատությունը վաղնջահայերենի՝ ակադ. Գ. Զահուկյանի կողմից վերականգնված բաղաձայնական համակարգի հետ բացահայտում է հետաքրքիր զուգադիպումներ, որոնց մասին ստորեւ:

²¹ И. К. ФЕДОРОВА, «Говорящие дощечки» с острова Пасхи, Санкт-Петербург, 2001, с. 62–63.

²² V. KRUPA, Consonantal Change in the Polynesian Languages, «Asian and African Studies», Bratislava, N6, 1972, p. 57–65.

²³ В. КРУПА, Полинезийские языки, М., 1975, с. 19.

ա) Գ. Զահուկյանի կարծիքով, վաղնջահայերենը պետք է որ ունենար հետեւյալ բաղաձայնները. *b(h), *d(h), *g(h), *j(h), *p, *t, *k, *c, *p', *t', *k', *wc', *f (*β)?, *δ (*θ), *x (*γ?), *s, *z, *h եւ *r, *r', *l, *m, *n ձայնորդները (մգացված են այն բաղաձայններն ու ձայնորդները, որոնք առկա են պոլինեզիական լեզուներում): Դրանց թվում, «...վաղնջահայերենի բուն ձայնորդների շարքը պիտի կազմեին *r, *r', *l, *m, *n ձայնորդները»²⁴: Ձայնորդների այս շարքն առկա է պոլինեզիական լեզուներում եւ վերականգնվում է նախապոլինեզերենում՝ բացառությամբ n(*r')-ի: Բայց անհրաժեշտ ենք համարում նկատել, որ ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում գործում է ռապանուերեն r – հայերեն n համապատասխանություն, ինչը նկատվում է նաեւ հայերենում: Բերենք օրինակներ.

ռապան. aaru₁ (a-aru) «բռնել, խլել» – գրբ. առ «առնելը, գրաւում, կողոպուտ, յափշտակութիւն, աւար եւլն», որից՝ առնուլ «առնել, գրաւել, նուաճել, խլել եւլն» (բխեցվում է հնիս. ar- «տալ, բաժին հանել, առնել, յուրացնել» արմատից)²⁵,

ռապան. aaru₂ (a-aru) «միացնել բռնակով» – գրբ. յար «կից, կցուած, կողք-կողքի, միացած» (ar- «կցել, միացնել») եւ առ- (նախդիր եւ նախածանց) «մոտ, դեպի, կողքին» իմաստով, որից՝ առուկ, առլնթեր, առան-ձին (*per- արմատից)²⁶,

ռապան. ara₄ «արթնացնել», «արթնանալ» – գրբ. յառնել (յարեայ, արի) «վեր կենալ, կանգնել» (բխեցվում է *r-n-՝ *er- «շարժվել, բարձրացնել, հուզել»-ից)²⁷,

ռապան. aro «առջեւի կողմը» – գրբ. առ- «նախդիր կամ նախադրութիւն, որ զանազան հոլովներով զանազան նշանակութիւններ է ստանում, այդ թվում դիմը, առջեւ... (բխեցվում է հնիս. par- ձեւից, որի բունն է համարվում *perə- «առաջի»)²⁸,

ռապան. gorogoro (goro-goro) «փնթփնթալ, խռմփացնել» – գրբ. գոռ «գոչիւն, բոռալու ձայն, բղավոց» (թերեւս հ.-ե.՝ *ghor-s՝ *gher- բնաձայնական արմատից)²⁹,

²⁴ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 225-226:

²⁵ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 1, էջ 247, Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 72:

²⁶ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 72:

²⁷ Անդ, Երեւան, 2010, էջ 548:

²⁸ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ, ՀԱԲ, հտ. 1, էջ 247:

²⁹ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 168:

ռապան. **hariu**₂ «նայել ծուռ, թեք, խորամանկորեն», **ariu** «նայել ինչ-որ մեկին» – գրբ. **յառել** «հառել, մեկնել, սեւեռել, անքթիթ նայել» (ըստ Զահուկյանի՝ «թերեւս յ- նախածանցով բնիկ հ.-ե.՝ *ar-s-՝ *ar- «հարմարեցնել, կապել» արմատից)»³⁰,

ռապան. **hiro**₁ «ոլորել, պտտել», **huri**₄ «շրջվել», «փաթաթվել, ոլորվել, կծկվել» – գրբ. **հիռ** «պտոյտ, շրջան, գալար» (թերեւս *per-s-՝ *sper- «պտտել, շրջել» արմատից),

ռապան. **kero** «թեք(վ)ել, ծալ(վ)ել» – գրբ. **կեռ** «ծուռ, կեռ, ճանկ» (*ger-s-՝ *ger- «պտտել, ոլորել» արմատից),

ռապան. **hurihuri**₁ (**huri-huri**) «զայրույթ» – գրբ. **հեռ** «հակառակու-թիւն, գժտութիւն, կռիվ, ոխ» (*hers- «հուզել» արմատից)»³¹ եւ այլն:

Այսպիսով, վաղնջահայերենի համար Գ. Զահուկյանի կողմից վերականգնված ձայնորդների շարքը եւս առկա է պոլիներգիական լեզուներում եւ վերականգնվում է նախապոլիներգիներում, իսկ հայերենի կոշտ **ռ(*i)**-ի համար հնարավոր է ենթադրել երկրորդային ծագում:

բ Հայտնի է, որ հ.-ե. ***Լ**-ի դիմաց հայերենն ունի **Լ (ղ)**: Ըստ Գ. Զահուկյանի՝ վաղնջահայերենում «...***Լ**-ն հավանաբար դեռեւս գոյություն չի ունեցել որպէս **Լ**-ի հատուկ տարբերակ, առավել եւս որպէս առանձին հնչույթ»³² (ընդգծումը մերն է.– Լ. Ս.): Հիշեցնենք, որ հինգերորդ դարում (**Ա**) **ղ**-ն դեռեւս կողմնային ձայնորդ էր, հնչում էր որպէս կատկային [**ʎ**]: Հատկանշական է, որ այն՝ (***Լ**)-ն, ոչ միայն գոյություն չունի պոլիներգիական լեզուներում, այլեւ չի վերականգնվում նաեւ պոլիներգիական նախալեզվում:

Պոլիներգիական լեզուներում գործում է **ր/ʎ** հերթագայություն. օրինակ՝ ռապանուերենի **ր**-ին մի շարք պոլիներգիական լեզուներում (նիուէ, սամոա, արեւելյան ֆուտունա, նուկուորո, հավայերեն) փոխարինում է **Լ**-ն: Ի դեմս պոլիներգիական լեզուներում առկա այս **ր/ʎ** հերթագայության, կարծում ենք, որ գործ ունենք նախավոր ***ր**-ի տրոհման (**ր** > **ր**, **ր** > **Լ**)՝ այսպէս կոչված «եւրոպական օրենքի» արտացոլման հետ: Ասվածի ապացույց կարելի է համարել մի ամբողջ շարք բառերում բացահայտվող ռապանուերեն **ր/** սամոա, նուկուորո, հավայերեն, նաեւ հայերեն եւ այլ հնդեւրոպական լեզուներ **Լ**, իսկ մի շարք հայերեն բառերում՝ նաեւ **ʎ** համապատասխանությունները³³:

³⁰ Անդ, էջ 548:

³¹ Անդ, էջ 457:

³² Գ. Զ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 226:

³³ Տե՛ս Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Հայ-պոլիներգիական լեզվամշակութային ընդհանրություններ, Երեւան, 2015, էջ 83–84:

Բերենք օրինակներ.

1) *ռապան. r – հայ. լ.*

ռապան. raga, «հոսել, առաջացնել ջրափոս» – *հայ. լակ* – «լակում, լակելը» (*հ.-ե. *lakk-`*lak-* «չապացնելով ուտել, լակել»-ից), *լիթ. laku*, *լեթթ. laku*, *լakt*, *հւլ. lokati*, *լոֆա, սերբ. lõkati* *ռուս. локать*, *լեհ. lokam*, *նաեւ հայ. լական*, *բրբ. լազան* «կոնք, լազան»³⁴,

ռապան. rano 1) «հրաբուխ, հրաբխի խառնարան (լճով)», 2) «սար» – *հայ. լ) լայն* «լայն», *բրբ. լէն/* (*հ.-ե. *platen-`\*plāt-* «թեթեւ»), *հմմտ. սանս. prthú*, *լիթ. platùs*, *լեթթ. plats* *եւլն*, 2) *գրբ. լեառն*, *բրբ. լէռ/լէր/լեռ/լեր/լռռ* «լեռ, սար» (*հ.-ե. \*k'leitr-no`*k'lei-* «հենել, հակել, թեքել» արմատից), *հմմտ. լատ. clivus* «բլուր», *հնդկ. hlaiva*, *գոթ. hlaiw*, *անգլ. hlāw*, *հրգ. hlēo* «գերեզման»,

ռապան. riva «լավ» – *հայ. լաւ* «լավ» (*հ.-ե. *labh-* «բռնել, ունեցվածք, կալվածք» կամ **lē(e)-/lei-* «ցանկանալ» արմատից), *հմմտ. հ. հնդ. lābha* «ձեռքբերում, օգուտ, շահ», *հուն. λαφύρον* «ավար, կողոպուտ», *լիտվ. lōbis* «հարստութուն, գանձ», *lābas* «բարիք, բարի», *լատվ. labs* «լավ, բարի», *լիթ. labas* «հարստութիւն», «հնարավոր է համարվում նաեւ համեմատութունը *հ.-ե. *lē(e)-/lei-* «ցանկանալ» արմատից ծագող *հուն. λώϊος* «ավելի լավ» բառի հետ. տես ԱՃ. ՀԱԲ 2, 268»³⁵,

ռապան. ritorito (rito-rito) 1) «սպիտակ, պայծառ», 2) «կարմիր» – *հայ. լ) լուրթ* «պարզ, բաց, պայծառ, բաց կապույտ», 2) «պայծառ, ուրախ, պարզերես», 3) «պայծառ արթուն մտքով», *նաեւ լուրջ* «բաց կապույտ, պայծառ» (ըստ Զահուկյանի՝ հազիվ թե կապ ունի *հ.-ե. *lenk-*, **kleu-* «ողողել, մաքրել»-ի հետ), *հմմտ. նաեւ վրաց. լուրջի* «կապույտ», *մինգր. լուր-ժի*, *ինգիլ. լուրժ*, *սվան. յուրջ* «կապույտ», 2) *գրբ. լոյց*, *լուցումն* «բորբոքումն, վառումն», *լուցանել* «վառել» (**louks-*, **leuk-k*, **leuk-*)³⁶,

ռապան. raraga, (*rara-ga*) «հյուսել (կողով)», «գործել (ուռկան, ցանց)» – *հայ. որոգայթ* «թափարդ, ծուղակ»։ Ըստ Գ. Զահուկյանի՝ «կազմված է –այթ վերջածանցով. (հմմտ. ճառագայթ)՝ որոգ արմատից, որ, թե-րեւս, ծագում է հնդեւրոպական **ro-* ձեւից՝ **reu-* «պատռել, քանդել, փո-րել» արմատից». *հմմտ. ռուս. роб* «փոս»³⁷։

³⁴ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 260: Համարվում է փոխառու-թյուն պարս. lakan (lagan)-ից:

³⁵ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 292:

³⁶ ՀԱԲ, էջ 304, Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 303:

³⁷ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 608:

Հաշվի առնելով, որ ռապանուերենում բառիս հիմնական իմաստն է «հյուսել», «գործել (ուռկան)» (ոչ թե «քանդել, փորել»), ռապանուերեն *rara* արմատը համեմատելի է դառնում նաեւ գրաբ. լար «առասան, թոկ, պարան, լար, թել, ուղղալար, թակարդ, տոռն» «պարանի կանեփոյ» բառի հետ (հնիս. *vləro-՝ *wel- «պտտել, ոլորել»), հմմտ. նաեւ վրաց. լարո «լար, առասան, թակարդ», լարի «մետաքսէ կտոր, նուագարանի լար, աղեղի լար»³⁸։ Մեր կարծիքով, վերջինիս՝ «հյուսված, գործված թակարդ» նախնական իմաստի օգտին է վկայում նույնարմատ հայերեն որոգայթա-դիր բառը եւ որոգայթ լարեալ լարիւք արտահայտությունը։ Նկատի ունենալով, որ ռապանուերենի *ga* մասնիկը հոգնակիության ցուցիչ է եւ համապատասխանում է գրաբարյան -ք հոգնակիակերտ մասնիկին³⁹, հնարավոր է ենթադրել ռապանուերեն *raraga*₁ (*rara-ga*) – գրաբ. լար-ք համապատասխանություն՝ «թել-ք, պարան-ք» իմաստով։

ռապան. *reo*₁ «ձայն», «հնչող» – գրբ. լու «լսելի» (լու <*k'lutos-), լու առնել «լսել տալ», լու լինել «լսուիլ», լու ի լու «լսելով, լսելի լինելով», հրամ.՝ լուռ⁴⁰, հմմտ. ռուս. слышать «լսել», նաեւ լուր «ձայն լսելի, հնչյուն», որից լսել բայի հրամայական եգ. բ. դեմքը՝ լու'ր (*k'luro- *k'leu «լսել» արմատից, որից նաեւ լու, լում, լսել)։

Նախնական *r*-ն պահված ենք գտնում սանս. ɕru «լսել», ɕrutá- «լուեալ», ɕrúti- «աականջ, տեղեկություն, լուր», ɕruš «լսել», զնդ. sru «լսել», srūta- «լուեալ», պհլ. srūtan «արտասանել», պրս. surūd «երգ», surūdan «երգել, խօսիլ» զուգահեռներում, իսկ Լ-ն՝ լատ. clueo, cluo «հռչակուիլ, անունը դուրս գալ», գոթ. hluma «աականջ», հ. բ. գ. hlosēn «աականջ դնել», hlūt «բարձրաձայն, լսելի ձայնով», ն. բ. գ. losen «աականջ դնել», կիմր. clywed, կորն. clevaf եւ բրլտ. klévout «լսել», հիսլ. hlust «աականջ», անգլ. listen «լսել», հսլ. slut i «կոչիլ, անվանի լինել», ռուս. слушать, слышать «լսել», слухъ «լսելիք» եւ ալւն,

ռապան. rerarera (*rera-rera*) «ծովի մակերեւույթը» – գրաբ. երեր «երերում, տատանում» (բխեցվում է *tres- «դողալ, երերալ»-ից), բրբ. էրէ-րալ/էրըրալ/էրէլմ/իարոլ (ըստ Հր. Աճառյանի՝ պարզ արմատն է *ter-*, որ պահված է միայն սանս. tarala «վախից դողալով» բառի մեջ) հմմտ. նաեւ

³⁸ ՀԱՐ, էջ 267–268։

³⁹ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, նշվ. աշխ., էջ 170–173։

⁴⁰ Լու արմատը պահում է Ղրբ. լիւ «լսիր, թող, կայց». ինչ. լիւ կաց, լիւ ասեմ «կայց, ասեմ» (ՀԱՐ, 307)։

սանս. trasati «դողալ», զնդ. tərəsaiti «վախենալ», լատ. terreo «վախեցնել», terror «սարսափ», հւլ. tresa «ցնցել», ռուս. тряхти «ցնցել», трясенный «երերալ»⁴¹, նաեւ գրաբ. լեւալ «երերալ, շարժվել» (բխեցվում է *lel- բնաձայնատիպ արմատից), հմմտ. նաեւ լիտվ. liliuoti «օրորել, ճոճել», չեխ. leleti «հուզել», ռուս. лежать «ալիքների վրա օրորել»⁴² եւ այլն:

2) ռապան. r – հայ. լ>ղ.

ռապան. ragaraga₂ (raga-raga) «լողալ» – բնիկ հայ. լոգանալ/լոկանալ/լողկանալ «լողանալ» (*louəṇā, *lou- «լվանալ» արմատից), լող (լաւղ, լոյղ, դող, դաւղ եւլն) «լողալը» (*lel- (այլեւ *lul-, *lal-) «օրորել, ճոճել, դես ու գեն շարժել» արմատից),

ռապան. ruru₃ «ցուրտ» – հայ. բրբ. սլուլ «սառնամանիք», սղին «սառցաշերտ», սղոն «սառցակտոր»⁴³, լեղուլ «ջրի մէջ հարելով հալեցնել» (հ.-ե. <*lel-), լիլի «սառույցի կակղիլ՝ հալիլ սկսելը» (հ.-ե. *leg- «կաթել, ծորալ»),

ռապան. horihori «հոգնություն, հոգնել» – հայ. յոյլ «ծուլ, դանդաղ, ծանրաշարժ» (*solio-՝ *sel- «սողալ, սողոսկել»), որից՝ յուլանալ/յուլանալ «ծուլանալ», նաեւ յողալ «ծուլանալ», յուլող «մեղկացուցիչ», յողեալ «ընկեցեալ»,

ռապան. rogo «հաղորդում» (հմմտ. հ.-ե. *lok² «խոսել») – հայ. ողոք «աղաչանք», ողող «ողբ, լաց, կոծ» (հնիս. ol-), ողողանալ (-անիլ) «լալ, ողբալ» (*ol-ol-՝ *el- բնաձայնական արմատից), ողբ «ողբ» (*el-, *ol-ից),

ռապան. roiroi «հոսել բերանից (թուքի մասին)» – հայ. լորձն «լորձ, լորձոնք» (*s)lend(հ) «սահել» արմատից), նաեւ լոյծ «հալուկ, հալհալուկ» (leu-, lou-), հմմտ. լատ. re-luo «լուծել», so-lvo «լուծել», lues «լուծույթ, անմաքուր հեղուկ», ողող «թափելը, հոսելը», «ողողել, հեղեղել, ցողել, պարզաջրել» (բխեցվում է *pol-ի կրկնավոր ձեւ՝ *pel- «թափել, հոսել, լցնել» արմատից),

ռապան. hare₃ «թափել, ոթել, վայթել» – հայ. հալ «հալք, հալչելը» «լցնել, հոսել» (հ.-ե. *pl- (*pol, *pel-) «լցնել, հոսել»-ից) եւ հեղ- «թափել, լցնել» (հ.-ե. *pel- «լցնել, թափել, հոսել»), որից՝ հեղուկ «թափել» հեղեղ, նաեւ զեղ, որից զեղուկ, զեղանիլ «թափուելու չափ լցուիլ» (հնիս. *pel-ից), տես նաեւ հայ. ողովթի (որովաթի) «հեղեղ» բառը, որ Գ. Զահուկյանը միացնում է ողող բառի հետ,

⁴¹ ՀԱԲ, հ. 2, էջ 48-49:

⁴² Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 294:

⁴³ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, էջ 275:

ռապան. **huri**₂ «փորել» – գրաբ. **հոր** «փոս, խոր, ջրհոր», որից՝ հորել (*poro-՝ *por- «անցկացնել», «անցնել»?), անհայտ ծագման գրաբ. **փոր** «ծակ, պարապուկյուն, մեջը փոս տեղ», որից՝ փորել, (յետնաբար գրուած նաեւ **պորել**), բնիկ հայ. **պեղել** «փորել, հողը փորելով դուրս հանել» (bel- «կտրել, հանել, փորել» արմատից. հմմտ. սանս. bīla- «խոռոչ, ծակ, բացվածք», bīlma- «տաշեղ», վեդ. bāra- «ծակ, բացուածք», միդ. belach «ծերպ, ճեղք», նիդ. bealach «ճամբայ, լեռնանցք»), անհայտ ծագման գրաբ. **փող** «նեղ անցք, խողովակ»⁴⁴,

ռապան. **are**₁ «ծաղիկ», **tiare** «ծաղիկ, ծաղկելը» – բնիկ հայ. **ծառ** «ծառ» (*g'rsō-)⁴⁵, ծաղիկ «ծաղիկ» (*g'ol-(+իկ)՝ *gel- «պայծառ, զվարթ շողալ» արմատից): Ռապան. **are1** «ծաղիկ» բառի նախնական՝ *ր-ով* արմատը պահված ենք գտնում հայ. **առուեղ** «մի տեսակ անծանօթ ծաղիկ», **առուոյտ**, գրված նաեւ **առուտ**, **առվոյտ**, **առոյտ**, **առուտ**, **առուտ** եւլն «մի տեսակ խոտ», **առսան** «անծանոթ մի բույս»⁴⁶, բրբ. (Խրբ.) **արիշի** «որթատունկ», (Հվր.) **արիովր** «վայրի կանաչի տեսակ», (Մշ.) **արուք 1** «չոր ծառ», 2) «չորացած ծիրանենի», (Խն.) **արուսուկ** «ուտելի բանջար», (Ալշ. Հմշ. Նն.) **արոտ/արող**, (Գնձ. Ղրբ.) **արուտ** «մարգագետին, արոտավայր»⁴⁷, (Ակն) **արոտակ** «գիհիի նման ծառ, ձխնի», (Լ.) **արոտկան** «լավ արածող»⁴⁸ բառերում, իսկ *լ/ղ-ով* տարբերակը՝ բնիկ հայ. **ծիլ** (ծիղ/ծէղ) «ծիլ, ընձուղ, բողբոջ» (*gī-lo-՝ *gēi- «ծլել, ծաղկել»)՝⁴⁹ եւ, թերեւս վերջինիս ձայնդարձային տարբերակ, սակայն կովկասյան (քարթվելական) աղբյուրից փոխառություն համարվող **ծալան** (բրբ. **ծալամ**) «խաղողի ուռ»⁵⁰ բառերում,

ռապան. **po** «մթնոլթյուն», «գիշեր», «օր» – գրաբ. **բալ/բաղ** «մէգ, մթին, մռայլ, մթագույն», «ամպ, աղոտ», «ծխի քուլա, գիշեր» (*bhəl- «փայլուն, սպիտակ» արմատից), սանս. bhala- «փայլ», հսլ. bēlū «սպիտակ», լիթ. báltas «սպիտակ», լեթթ. bāls «գագոյն», գոթ. bala «գագոյն» եւ այլն,

ռապան. **kikiri**₁ (ki-kiri) «գլաքար» – գրաբ. **գիլ/գիղ** «գլորում, քար» (*uel- «շրջել, ոլորել, պտտել, գլորել» արմատից), հմմտ. հ. հնդ. válati

⁴⁴ Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 766:

⁴⁵ ՀԱԲ, հտ. 2, էջ 446:

⁴⁶ ՀԱԲ, հտ. 1, էջ 265:

⁴⁷ Իմաստային մերձավորության առումով տես հատկապես՝ առաջի պառկեցնել արտահայտությունը՝ «հիվանդին լողացնել խոտերի թորմով» իմաստով:

⁴⁸ «Հայոց լեզվի բարբառային բառարան», Երևան, 2001, էջ 133–134:

⁴⁹ Գ. ՋԱՆՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 362:

⁵⁰ Անդ, էջ 357:

«ոլորել, գլորել, փաթաթել», լատ. volvō «ոլորել, գլորել, դարձնել», հ. վ. գերմ. welzan «գլորել», ռուս. балыш «գլաքար» (տես նաև գրաբ. գուլ «բուլթ, ոչ սուր» (դանակ), որից՝ գլիլ «բթանալ»),

ռապան. kero «թեք(վ)ել, ծալ(վ)ել» – գրաբ. կեռ «ծուռ, կեռ, ճանկ» (*ger-s-` *ger- «պտտել, ոլորել» արմատից), նաև կեղ «ծուռ, թյուր, թերի», ըստ Զահուկյանի՝ թերեւս կ/խ հերթագայությունը կապված է խեղ բառի հետ, որ ծագում է հ.-ե. *(s)k(h)el- «ծռել, հենել, ծուռ» արմատից»⁵¹ (տես նաև կաղ) եւ այլն:

Բերված (եւ ոչ միայն) օրինակները թույլ են տալիս ենթադրել, որ գործ ունենք նախաձոր r-ի տրոհման (r>r, r>l) «եւրոպական» կոչված օրենքի արտացոլման հետ:

զ) Հայտնի է, որ գրաբարում վ հնչյունն ուներ եռատառ գրություն՝ վ, Լ, ու (v, w, u): Պոլինեզիական լեզուներին հատուկ է w/v հերթագայությունը, իսկ ռապանուերեն-հայերեն բառային զուգահեռներում գործում է ռապանուերեն u/v – հայերեն վ/լ համապատասխանություն, ինչպես օրինակ՝

ռապան. toutou (tou-tou) «թավ, խիտ (բույսերի, ծառերի մասին)» – գրաբ. թաւ, որից՝ թաթաւ (t'at'aw) «թանձր, խիտ (ծառի, անտառի համար ասված)» (բնիկ հայ բառ՝ հնխ. *tuo-, *tēu- «ուռչել» արմատից),

ռապան. tau, «տարի, դարաշրջան» – գրաբ. տիւ «ցերեկ, օրվա լույս մասը» (բխեցվում է հնխ. *deu-` *dei- «շողալ, փայլել» արմատից), տես նաև տի «օր», առանձին անգործածական արմատ, որ «կայ միայն երկտի «երկու օր» բարդի մէջ...» եւ տի «տարիք, հասակ» (հնխ. *dit կամ *diti)⁵²,

ռապան. taviri tavara «պտույտ գալ, բոլորածիր պտտվել» – գրաբ. թաւալ «թավալում, գլորում» (ըստ Գ. Զահուկյանի՝ թերեւս *tap- «սեղմել» արմատից)⁵³,

ռապան. kevakeva (keva-keva) «ուժեղ ցավ» – հայ. ցաւ «ցավ» (Գ. Զահուկյանը կասկածով բխեցնում է *k'sā-po-` *k'sā- «այրել» արմատից),

ռապան. hau, «հով, սյուր» – գրաբ. հով «հով, հովանի, քամի» (*pou-` *p(h)u- «փչել, ուռչել» արմատից) եւլն:

դ) Արդի հայերենը բաղաձայնական հարուստ համակարգ ունեցող լեզու է, ունի եռաշարք պայթականներ, պայթաշփականներ եւ շփականներ: Ժամանակակից հայերենի եռաշարք պայթականների դիմաց

⁵¹ Անդ, էջ 397:

⁵² ՀԱԲ, էջ 403:

⁵³ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 261:

ռապանուերենն ունի միայն խոսվ պայթականների շարքը: Ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրություններում գործում է խոսվ-ծայնեղ համապատասխանություն:

Ռապան. k – հայ. գ.

kiki₁ (ki-ki) «խոսել», «ասել» – հայ. **գո'գ** «ասել, գոչել» (հնխ. *oguh-, *ueguh- «հանդիսավոր կերպով խոսել»), kikiri₁ (ki-kiri) «գլաքար» – հայ. **գիլ** (գիղ) «գլորում, քար» (*uel- «շրջել, ոլորել, գլորել, պտտել», **գուլ** «պակասեալ 'ի սրութենէ» (*uel- «պտտել, ոլորել»), kio₄ «հմայել» – հայ. **գերել** «թովել, հմայել» (*ueriio-, *uer- «գտնել, վերցնել»), korokoro₂ (koro-koro) «հնդկահավ» – հայ. **գոռել** «հնդկահավ» (գոռալ բայից, որ ծագում է *gher- բնաձայնական արմատից), ka₄ «գերազանց», kura₂ «լավագույն, ընտիր» – հայ. **գեր** «վեր, աւելի քան, բարձր» (*uer- «բարձրացնել»), kau₁ «գնալ» – հայ. **գա-** «գալ» (*uadh- «քայլել, գնալ»), գնալ (*ghhē-nā-mi-`\*ghē- (չբմայնացած \*gh-ով) «լքել, հեռանալ, գնալ» արմատից)<sup>54</sup>, karu «սերմ, հատիկ» – հայ. **գարի** «գարի» (\*gher- «դուրս գալ, բուսնել, քիստ ունենալ» արմատից` *gharua- (°)), kite₂ «տեսնել, նկատել», «իմանալ» – հայ. **գէտ** (գիտ) «գիտակ, գիտուն, գիտցող» (*ueid-/uoid- «տեսնել, գիտենալ»-ից), rakeia (rakei-a) «հագնված» – հայ. **ագանիմ** «հագնել» (ըստ Զահուկյանի` \*ou-` (*eu- «հագնել»-ից), koa «բավարարվածություն, լինել բավարարված» – հայ. **գոհ** «արմատ գոհանալու»⁵⁵, kori «զավթել, խլել, գողանալ, գող» – **գող** «գող», գող- «անհետացում, գրավում, զավթում» (*uolo- *uel- «պոկել, շորթել, թալանել»-ից) եւն:

Ռապան. t – հայ. դ.

tigi «փոքրիկ քարե կացին» – հայ. **դակու** (տակու, դակուր, դագուր) «ուրագ կամ կացին» (*dhāgu(r)-, *dhag- «սրել, ծակել»), toku «իմ» – հայ. **դուք** «դուք», turi «եղեգի տեսակ», tuere «բույսի անվանում» – հայ. **դեղ** «(կանաչ, դալար) խոտ, դեղաբույս, բուժախոտ» (*dhel- «ծաղկել, կանաչել», *dhal-), terea (tere-a) «հանգստություն, հանգիստ» – հայ. **դարել** «կանգ առնել, կենալ, մնալ» (*dher- «պահել, մնալ»), tatari «սպասել» – հայ. **դադար** «հանգիստ, դադարի տեղ, կանգառ» (*dher- «պահել»), tanu «թաղել» – հայ. **դամբ** «թաղում» (*dhmbh-`*dembh- «թաղել»), ta «այդ» – հայ. **դ** երկրորդ դեմքի ցուցական հոդ, **դա** «դա, այդ» (*to- ցուցական հիմքից), tai «ծով, օվկիանոս» – հայ. **դանդ** «թանձրացեալ մրուր հեղուկ

⁵⁴ Անդ, էջ 164:

⁵⁵ Համարվում է իրանական փոխառություն, բայց բուն աղբյուրը չի հավաստված:

նիւթոց» (*dhn-dh-, dhm-dh-` *dhem-, հմմտ. լատվ. danga «կեղտոտ ջրափոս») եւ այլն:

Ռապան. ք – հայ. ք.

քՕ «մթուխուն», «գիշեր», «օր» – հայ. քալ/քաղ «մէգ, մթին, մռայլն, մթագուն», «ծխի քուլա, գիշեր» (*bhel- «փայլուն, սպիտակ»), քոտ «դանակի սուր ծայրը» – հայ. քութ «բութ, գուլ» (*bhu-t-` *bhau-, bhu- «խփել, հրել»), քաւ «ասել, պատմել» – հայ. քալ «խօսիլ, ասել», պարզ արմատն է՝ քա, որից՝ քարքառ «հնչուն, ձայն, խօսք, լեզու»⁵⁶ (հնխ. bha- «խոսիլ» արմատից), քաի «բշտիկ» – հայ. քուշտ «պալար, ուռուցք, բշտիկ, պալար» (*b(h)(e)u- «ուռչել»), pipiri₁ (pi-piri) «որսալ, բռնել» – հայ. քուռն «ձեռքի բուռ, բռնի, բռնավոր», բռնեմ «ի բուռն առնել, ճանկել» (*bhōr-, *bhōr-no-, *bher- «բերել, տանել»), քաւր «ամբողջ» – հայ. քուրր «ողջ, համայն», «ամբողջ, բոլորակ» (*bhol-, *bhel- «փչել, ուռչել, բխել» արմատից), քա₂ «յուզոտ», «չաղ», քու, քուի «ազահաբար ուտել, ճարպակալած» – հայ. քուտ/քութ «ուտելիք, կերակուր» (*bhug- «վայելել» – ից), քուի ա) «կատաղություն, զայրույթ» – հայ. քոհ «սպառնալիք, վախ, երկյուղ, սոսկում», որից՝ քոհմունք «ահագին ցասումն եւ սպառնալիք» (բնաձայն, կազմություն), բ) «սպառնալ, հանդիմանել» – հայ. քողոք «գանգատ՝ աղաղակաւ» (*bholo-ko-, *bhel- «հնչել, խոսել»), քա₂ «սկսել ծեծկռտուք» – հայ. քախ «արմատ բախելոյ, բախումն», «ընդհարում», «ավելի ուշ՝ բաղխ «հարված» (թերեւս զուգահեռ հ.-ե. *bhu(m)bh-ին), ինչպես նաեւ իրանական լեզուներից փոխառություն համարվող մի շարք բառերում՝ քա₁ «ավարտել, վերջացնել» – հայ. քաւ «ծայր, վերջ, սահման» (համարվում է փոխառ. պրսկ. bav-ից), քա₃ ա) «մաս, բաժին» – հայ. բաժին/բարժին (բաժ) «մաս, բաժին» (համարվում է փոխառություն իրանական աղբյուրից՝ bāžīn), բ) «բաժանել» – հայ. բաժ «մաքս, հարկ, տուրք» (համարվում է փոխառություն իրանական աղբյուրից՝ baž)⁵⁷, քա₇ «բավական, բավականաչափ» – հայ. քաւ, որից բաւարար, բաւական, բաւել «այնչափ, որչափ պիտոյ իցե» (համարվում է փոխառություն պրսկ. bav-ից) եւլն:

Հիշեցնենք, որ նման (խուլ-ձայնեղ) համապատասխանությունը հատուկ է **ցեղակից** լեզուներին: Է. Սեպիրը գտնում էր, որ լեզվի կաղապարը անփոփոխ էություն է, որը որոշում է, սակայն, փոփոխությունների բնույթն ու ուղղությունը. «...ցեղակից լեզուները կարող են հնչյունապես

⁵⁶ Հր. ԱճԱՌՅԱՆ, ՀԱԲ, էջ 385:

⁵⁷ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 111, 112:

տարբեր լինել, բայց նրանց հնչունական համակարգերի կաղապարները կհամընկնեն այնպես, որ մի լեզվի **b, d, g** հնչուններին կարող են համապատասխանել մեկ այլ լեզվի **p, t, k** հնչունները»⁵⁸։

Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ռապանուերեն-հայերեն բառային ընդհանրությունների բնույթի որոշման հարցում հենվենք այդ ընդհանրություններին բնորոշ հնչունական համապատասխանությունների բնույթի վրա։

РЕЗЮМЕ

В результате сопоставительного сравнения армянского и полинезийских языков, в частности, рапануйского (остров Пасхи), обнаружены общие фонетические особенности. Некоторые из них выявлены между рапануйским и протоармянским, а звуковое соответствие глухой-звонкий, характерная для родственных языков, обнаруживается между рапанануйским и древнеармянским (грабар).

По нашему мнению, при определении характера рапануйско-армянских лексических общностей было бы правильно полагаться на характер фонетических соответствий характеризующие эти общности.

SUMMARY

Some common phonetic characteristics have been revealed as a result of a comparative study of the Armenian and some Polynesian languages (the Rapanui language spoken on Easter Island, in particular). Some of them are revealed between Rapanui and Ancient Armenian languages, and the deaf-sonorous phonetic correspondence characteristic of related languages is found between Rapanui and the Classical Armenian language.

From our perspective, while determining the nature of Rapanui-Armenian lexical features, it would be more reasonable to rely on phonetic similarities existing between these languages.



⁵⁸ Э. СЕПИР, Язык, М.-Л., 1934, с. 134.